ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԻՏԱԼԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ն.
martino-1988@mail.ru

Կայսերապաշտական հասարակարգի ձևավորման նախաշեմին վերամիավորված Իտալիայում իշխող քաղաքական ուժերն իրենց երկրի ապագան չէին պատկերացնում առանց գաղութատիրության: Իտալիայի կառավարող վերնախավի համար գաղութներ ձեռք բերելը մեծ տերություն դառնալու ճանապարհին պարտադիր քայլ էր: Նրանք դա համարում էին անբեկանելի ճակատագիր Իտալիայի համար, ճիշտ այնպես ինչպես, եղել էր XIX դարում Անգլիայի, Ֆրանսիայի, Բելգիայի և Ճապոնիայի համար[1]:

Իտալիան վերամիավորումից հետո առաջին անգամ պատրաստվում էր իր պետական սահմաններից դուրս տարածքներ ձեռք բերել: Դրանք էին Տրիպոլիտանիան և Կիրենաիկան, որոնք գտնվում էին Օսմանյան կայսրության կազմում:

1911 թ. Օսմանյան կայսրությունում իշխող երիտթուրքական վարչակարգը մխրճվել էր արտաքին ու ներքին քաղաքական խորը ճգնաժամի մեջ: Հետզհետե ավելի էր ընդլայնվում Եմենի ապստամբությունը: Նոր թափ էր ստացել մակեդոնա-ալբանական շարժումը, որը սպառնում էր միջազգային բնույթ ստանալ[2]:

1911 թ. սեպտեմբերի 28-ին Կ.Պոլիս է հասնում Իտալիայի արտգործնախարար Մարչեզե Դի Սան Ջուլիանոյի վերջնագիրը՝ ուղղված երիտթուրքական կառավարությանը[3]: Հաջորդ օրը Իտալիան ռազմական գործողություններ է սկսում Տրիպոլիում: Օսմանյան մոտ 7 հազարանոց զորքը դիմադրում է իտալական 35 հազարանոց լավ սպառազինված բանակին: Իտալիայի դեմ

---

[1] **Stefano Orazi,** Imperialism and National Pride in the Italo-Turkish War (1911-12), ICSR Mediterranean Knowledge (Ed), WPC-Vol. 2017, p 60.

[2] **Շահրիկյան Հ.,** Հայկական ռեֆորմները Թուրքիայում, էջ 66:

[3] **Mcclure W.K.,** Italy in North Africa, an Account of the Tripoli Enterprise, London 1986, p 21.

պատերազմը տեղում գլխավորելու համար Տրիպոլի մեկնեցին Էնվեր և Խալիլ բեյերը, Մուսթաֆա Քեմալը, Իսմեթը, Վասըֆը և այլ սպաներ[4]: Եգիպտոսը բացահայտ չեզոքություն ցուցաբերեց, իսկ եվրոպական տերությունները լուռ հետևում էին իրադարձությունների հետագա զարգացմանը:

Իտալական նավատորմը ռմբակոծում է Իզմիրը և Դարդանելի ամրությունները: Օսմանյան կայսրությունը ժամանակավորապես բոլոր տեսակի նավերի համար փակված է հայտարարում Բոսֆորի և Դարդանելի նեղուցները[5]: Այս ամենը ծանր վնասներ է հասցնում Ռուսաստանի արտաքին առևտրին: Ռուսական կայսրությունը ենթադրաբար պետք է պահանջեր բացել նեղուցները իր առևտրական նավատորմի առջև[6]: Գերմանիան և Ավստրո-Հունգարիան չէին միջամտում՝ հաշվի առնելով Իտալիայի արտաքին քաղաքական կողմնորոշումը:

Օսմանյան բանակը պատրաստ չէր այս պատերազմին, «Իթթիհատ վե թերրաքքը» կուսակցությունը նույնպես, քանի որ չէր լուծել նույնիսկ երկրի ներքին քաղաքական անկյունաքարային խնդիրները: Ընդհակառակը, երիտթուրքերը սկսած 1908 թ. խորհրդարանական ընտրություններից, արդեն իսկ ցույց տվեցին, որ իրենց հուզող գլխավոր խնդիրը խորհրդարանում մեծամասնություն ապահովելն է և, հետևաբար, ամեն գնով իշխանության գլուխ մնալը:

Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո արևմտահայությունը ոչ մի քայլով կասկածի տակ չէր դրել իր հավատարմությունը ընդհանուր հայրենիքին: Սա պայմանավորված էր նրանով, որ հայերի միակ պահանջը Օսմանյան կայսրությունում բռնություններից ազատ ապրելու և տեղաշարժվելու իրավունքն էր: Ուստի, պատահական չէր երիտթուրքական հեղաշրջմանը հաջորդած ամիսներին հայերի գոհունակությունը սահմանադրական կարգերից: Նրանք սահմանադրության սկզբունքների կիրառումից բացի ոչինչ չէին պահանջում[7]: Կարելի է կարծել, որ թուրքերը ոչ մի բարոյական իրավունք չունեին ակնկալելու հայ ժողովրդի աջակցությունն այս պատերազմում: Տրամաբանական կլիներ հայերի լիակատար չեզոք կամ հակաթուրքական դիրքորոշումը, քանի որ, սահմանադրության հռչակումից հետո անցել էր երեք տարի

---

[4] **Փափազյան Վ.,** Իմ յուշերը, հատոր Բ, Պէյրութ 1952, էջ 155:

[5] **Шацилло К.В.** Россия перед первой мировой войной, М., 1974, с. 54.

[6] Ազատամարտ, 2.10.1911:

[7] **Չորմիսեան Վ.,** Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Գ հատոր (1908–1922), Պէյրութ, 1975, էջ 39:

և չէր լուծվել արևմտահայության և ոչ մի հիմնախնդիր: Ավելին, եթե սահմանադրության հռչակման առաջին ամիսներին հայերը որոշակի ազատություններ էին վայելում, ապա 1909 թ. սկսած իրավիճակը փոխվեց: Արևմտյան Հայաստանում կրկին թափ առան կանանց և աղջիկների առևանգումները, բռնի կրոնափոխությունը, խաֆիրությունը և հողերի բռնազավթումը: Չնայած խորհրդարանում հայ պատգամավորների ներկայացրած դիմում բողոքներին և ճառերին, երիտութուքերը լուռ հետևում էին, թե ինչպես են Արևմտյան Հայաստանի պաշտոնյաներն ու էշրաֆները ընչազուրկ դարձնում կայսրության հավատարիմ քաղաքացիներին: Հայ պատգամավորների՝ այս բովանդակությամբ առաջ քաշած հարցերը կամ անտեսվում էին կամ հետաձգվում: Շատ հաճախ խորհրդարանում մեծամասնություն կազմող թուրք և քուրդ պատգամավորները տարբեր մեթոդներով պարզապես փորձում էին լռեցնել նրանց:

Հենց երիտթուրքական կառավարության հանցավոր անգործության կամ դիտավորության արդյունքում էր, որ այդ երևույթները Արևմտյան Հայաստանում աստիճանաբար սկսում էին ընդունել ծավալուն ու համակարգված բնույթ: 1909 թ. ապրիլին պոռթկաց Ադանայի աղետը, երբ թուրքական բարբարոսության զոհ գնաց 30 հազար հայ: Եվ այսքանից հետո տարօրինակ է, բայց փաստ, որ հայերը և խորհրդարանի նրանց ներկայացուցիչները, անկախ իրենց կուսակցական պատկանելությունից, հավատարիմ մնացին պետությանը՝ իտալա-թուրքական պատերազմում: Դրա վառ ապացույցներից է Ռոդոսթոյի (Իզմիթ) հայ պատգամավոր Հակոբ Պոյաճյանի բաց նամակը՝ ուղղված Գերմանիայի արտաքին գործերի նախարար Մ. Քեթերլեն Վեխթերին: Նամակում երեսփոխանը, հիշեցնելով Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի լռությունը Իտալիայի անարդար ձգտումների հարցում, նախարարին հուշում էր, որ Իտալիան հետագայում նվաճվելու է իր զինակիցների կողմից, նույնիսկ եթե կարողանա գրավել Տրիպոլին: Իր կանխատեսումը պատգամավորը բացատրում էր նրանով, որ այդ պատերազմից հետո Իտալիան, տեղի տալով Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի սպառնալիքներին, լքելու է Եռյակ դաշինքը և անցնելու Անտանտի կողմը[8]: Շարունակելով իր կանխատեսումները՝ երեսփոխանը հայտնում է նախարարին, որ Գերմանիան և Ավստրո-Հունգարիան հարձակման են ենթարկվելու, ուստի խորհուրդ է տալիս փոփոխություն մտցնել Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ՝ հօգուտ Օսմանյան կայսրության: Իր կողմնորոշումը պատգամավորը հիմնավորում է

[8] Ազատամարտ, 2.10.1911:

հետևյալ խոսքերով. «...Այն օրը, երբ դուք եւ ձեր զինակիցները յարձակման ենթարկուին, եւ այդ չպիտի ուշանայ, (Օսմանյան կայսրությունը – Մ.Ն.) պիտի ըլլայ ձեր կողքին, եւ այն ատեն դուք պիտի տեսնէք անոր քաջ բանակին հրաշալիքները հասարակաց թշնամիին դեմ»[9]: Առաջին աշխարհամարտի ընթացքը ցույց տվեց, որ Հակոբ Պոյաճյանի կանխատեսումը իր կասկածելի լավատեսությամբ հանդերձ, ցուցադրում էր հայ պատգամավորների աջակցությունը երիտթուրքական կառավարությանը, որ երևում է նաև Օսմանյան խորհրդարանում ծավալած նրանց գործունեության ընթացքից:

1911 թ. հոկտեմբերի 1-ին՝ նախատեսվածից մեկ ամիս շուտ, բացվեց օսմանյան խորհրդարանի 4-րդ նստաշրջանը: Դա պայմանավորված էր ներքին և արտաքին քաղաքական ճգնաժամով: Երիտթուրքերին անհրաժեշտ էր ապահովել ներքին քաղաքական կայունություն, ինչը սկսվում էր խորհրդարանից: Օրենսդիր մարմինը բացվեց բավականին լարված մթնոլորտում: Իթթիհատականները ցանկանում էին խորհրդարանի նախագահ վերահաստատել Ահմեդ Ռիզա բեյին՝ խոստանալով ընդդիմությանը տալ մեկ փոխնախագահի պաշտոն: Երիտթուրքերի և նրանց ընդդիմադիրների միջև համաձայնություն չէր կայանում: Գործին փորձում են միջամտել Գ. Զոհրապը և Վարդգեսը՝ առաջարկելով կրքերը մեղմելու նպատակով հետաձգել ընտրությունը, սակայն ապարդյուն[10]:

Արդյունքում նիստի մասնակից 157 երեսփոխանները կատարում են նախագահի ընտրություն: Ընտրվելու համար թեկնածուներից մեկին անհրաժեշտ էր ստանալ 79 քվե: Ընտրության արդյունքում ընդդիմության թեկնածու Մահիր Սայիդ բեյը հավաքում է 55, իսկ իթթիհատական Ահմեդ Ռիզա բեյը՝ 86 քվե: Հայ երեսփոխանները, բացի Գ. Զոհրապից, ընտրում են Ահմեդ Ռիզա բեյին: Արդյունքում՝ իթթիհատականները խորհրդարանում կայունությունը հաստատում են հայ երեսփոխանների կողմնորոշման շնորհիվ:

Հայազգի պատգամավորների՝ կառավարությանը ցուցաբերած աջակցությունը այսքանով չի սահմանափակվում: Հոկտեմբերի 6-ին նրանք Գ. Զոհրապին լիազորում են մասնակցելու խորհրդարանական կուսակցությունների համերաշխությանն ուղղված բանակցություններին: Խորհրդակցությունը վարչապետ Սայիդ փաշային առաջարկում է կառավարությունում չընդգրկել նախկին անդամներին և, առհասարակ, ոչ մի կուսակցականի: Վարչապետը

[9] Նույն տեղում:

[10] Նույն տեղում:

մեկ ու կես ամիս ժամանակ է խնդրում, սակայն մերժվում է: Համերաշխություն հաստատելու փորձերը ձախողվում են: Նույն օրը խորհրդարանում քվեարկության է դրվում կառավարությանը վստահություն հայտնելու հարցը, Գ. Զոհրապը կողմ է քվեարկում[11]: Ոչ պակաս կարևոր քննարկում է տեղի ունենում խորհրդարանի հոկտեմբերի 27-ի նիստում, որտեղ ընդդիմությունը անվստահություն է հայտնում Մահմուդ Շեվքեթ փաշային՝ ընդդիմադիր երեսփոխան Լյութֆի Ֆիքրիին առանց խորհրդարանի թույլտվության ձերբակալելու փորձ կատարելու համար: Ընդդիմադիր պատգամավորը նաև հայտնի «Մեշրք» թերթի խմբագիրն էր: Երեսփոխանը, հակառակ կառավարության բոլոր հորդորներին և առաջացրած խոչընդոտներին, շարունակում է պատերազմի ընթացքում տպել վերոնշյալ թերթը: Շեվքեթ փաշայի հրամանով թերթը փակվում է: Սակայն Ֆիքրի բեյը, հայտարարելով, թե իր համար պատերազմական ատյանի որոշումները օրինական չեն և հակասում են ազատության սկզբունքին, առանց արտոնության տպում է արգելված թերթը[12]: Վարդգեսը իր հայտարարության մեջ պաշտպանում է Շեվքեթ փաշայի՝ Լութֆի Ֆիքրիի անձի դեմ ուղղված գործողությունները: Ավելին՝ հայ երեսփոխանը հայտարարում է, թե ընդդիմադիրները պետք է ամաչեն, որ պատերազմական պահին այսպիսի հարցեր են քննարկում[13]: Նրա այս վերջին խոսքերը զուգորդվում են իթթիհատականների ծափահարություններով:

Հայ պատգամավորները, հատկապես դաշնակցականները, երիթուրքերին աջակցում են նաև սահմանադրական բարեփոխման, մասնավորապես 43-րդ հոդվածի փոփոխության հարցում, ինչը ենթադրում էր կառավարության կողմից խորհրդարանի լուծարման իրավունքի ձեռքբերում:

Խորհրդարանի լուծարումից հետո, երբ անցկացվում էին արտահերթ խորհրդարանական ընտրություններ, իթթիհատականները, հակառակ իրենց խոստմանը՝ հայերի թիվը խորհրդարանում 20 հոգու հասցնելու, իրականացնում են հակահայ քարոզչություն, ինչի արդյունքում 1912 թ. խորհրդարանում հայերն ունենում են թվով 9 երեսփոխան[14]: 1912 թ. մայիսի 5-ին դաշնակցութ-

---

[11] **Շարուրյան Ա.Ս.,** Գրիգոր Զոհրապի կյանքի և գործունեության տարեգրություն, Էջմիածին, 1996, էջ 339:

[12] Տե՛ս Ազատամարտ, 28.10.1911:

[13] Նույն տեղում:

[14] Материалы Политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919), под. редакцией Вардгеса Микаеляна, Е., 1995, с. 135.

յունը Իթթիհատի կոմիտեին ուղղած իր պահանջագրում նշում է, որ ինքը խզում է իր հարաբերությունները այդ կուսակցության հետ[15]: Սակայն միաժամանակ, գործող կառավարության հեղինակությունը արտաքին հարաբերություններում չթուլացնելու նպատակով դաշնակցությունը նաև շեշտում է, որ մինչ իտալա-թուրքական պատերազմի ավարտը կառավարության դեմ թշնամական ոչ մի քայլ չի ձեռնարկի[16]: Եվ իսկապես, հետագա ամիսներին, երբ իթթիհատական կառավարությունը մխրճվում է խորը ներքաղաքական ճգնաժամի մեջ, դաշնակցական երեսփոխանները օսմանյան խորհրդարանում ոչ մի հակակառավարական կամ հակաիշխանական քայլ չեն ձեռնարկում: Այդպես են վարվում նաև մյուս բոլոր հայազգի պատգամավորները:

Կառավարությանը և հայրենիքին աջակցություն ցուցաբերելը չէր նշանակում, թե հայազգի երեսփոխանները դադարեցրել էին բարձրացնել արևմտահայությանը հուզող հարցերը: Հունիսի վերջին, երբ խորհրդարանը քննարկում էր «Դեֆթերհանեի» (կադաստրային մատենագրության) բյուջեի հաստատման հարցը, հայ պատգամավորներից Գեղամ Տեր-Կարապետյանը, Արշակ Վռամյանը, Գրիգոր Զոհրապը և Վարդգեսը մի քանի օր համառորեն պնդում են Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու անհրաժեշտության և հրատապության մասին: Արդյունքում վարչապետ Սայիդ փաշան խոստանում է, որ բարենորոգումներ իրականացնող հանձնաժողովը գործի կանցնի, երբ խորհրդարանը հաստատի վերջինիս ֆինանսավորումը[17]: Հայազգի պատգամավորները, վստահելով վարչապետի խոսքին և չցանկանալով ընթացող պատերազմի պայմաններում խաթարել համերաշխության մթնոլորտը, դադարեցնում են քննարկումը: Ուշագրավ է, որ հայ երեսփոխանների օրինակին չհետևեց և ներքաղաքական միասնությունը պառակտեց ընդդիմադիր «Հյուրիեթ վե իթիլյաֆ» կուսակցությունը, որի շուրջ համախմբված օսմանյան ընդդիմադիր ուժերը ցանկացած առիթ օգտագործեցին Իթթիհատին քննադատության թիրախ դարձնելու համար: Նույնիսկ 1911 թ. աշնանը, երբ նոր էր սկսվել իտալա–թուրքական պատերազմը, նրանք արաբ երեսփոխանների հետ միասին քննադատում էին իթթիհատական կառավա-

[15] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 81ա, թ. 6:

[16] Տե՛ս Материалы Политического архива министерства иностранных дел кайзеровской Германии..., с. 136.

[17] Ազատամարտ, 3.07.1912:

ությանը՝ Տրիպոլիից Իբրահիմ փաշային իր զորքով դուրս բերելու և Եմենի ապստամբների դեմ ուղարկելու համար[18]:

Օսմանյան կայրությունում ծայր առած ներքաղաքական ճգնաժամը 1912 թ. հունիս–հուլիս ամիսներին հասնում է իր բարձրակետին: Դեռևս 1909 թվականից ձևավորվող Իթթիհատին ընդդիմադիր ուժերը 1911 թ. միավորվել և ստեղծել էին «Հյուրիեթ վե իթթիլյաֆ» («Ազատություն և համաձայնություն») կուսակցությունը[19]: Այս կուսակցությունը 1912 թ. հունիսին սկսում է իշխանության յուրացման ակտիվ գործընթաց: Արդյունքում հուլիսի 3–ին, Սայիդ փաշայի կառավարությունը հրաժարական է տալիս:

Կառավարական ճգնաժամի վերաբերյալ առաջին անգամ խորհրդարանում բարձրաձայնում է իթթիհատական հայազգի փոխնախագահ Պետրոս Հալաճյանը: Որոշվում է Սայիդ փաշային հրավիրել խորհրդարան՝ բացատրություններ տալու, սակայն վերջինս չի ներկայանում:

Հայ երեսփոխանների խորհրդարանական խմբակցությունը որոշում է միջնորդել և հաշտեցնել երկու ուժերին[20]: Այս նպատակով հուլիսի 9–ին Իթթիհատին առաջարկվում է խորհրդարանում 50 պատգամավորական տեղ զիջել Իթիլյաֆին, սակայն Իթթիհատը մերժում է: Նշված երեսփոխանների քաղաքական այս քայլը բացառապես պայմանավորված էր նրանով, որ վերջիններս քաջ գիտակցում էին, թե պատերազմական պայմաններում պետության համար որքան վտանգավոր է ստեղծված իրադրությունը: Եթե հաշվի առնենք Իթթիհատի և Իթիլյաֆի գործիչների միջև առկա անվստահության մեծ չափաբաժինը և կասկածամտությունը, ապա հայ երեսփոխանների այս քայլը բավական հանդուգն էր: Քաղաքական ուժերից յուրաքանչյուրը այդ կարող էր համարել ծառայություն հակառակորդին, մանավանդ, որ իտալա–թուրքական պատերազմի հենց սկզբից մահմեդական մոլեռանդ ամբոխին հրահրում էին կայսրության քրիստոնյա բնակիչների, այդ թվում և հայերի դեմ: Այդ տրամադրությունները ի հայտ եկան նաև խորհրդարանում[21]:

Նույն օրը՝ հուլիսի 9-ին կազմվում է նոր կառավարություն՝ Ղազի Ահմեդ Մուխթար փաշայի գլխավորությամբ: Բնական է, որ կառավարությունը վաղ

---

[18] **Kayali H.,** Arabs and Young Turks, Ottomanism, Arabism and Islamism in the Ottoman Empire,1908-1918, Los Angeles, 1997, p. 67.

[19] **Սիմոնյան Հ.,** Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Ե., 1986, էջ 229:

[20] **Շարուրյան Ա.Ս.,** նշվ. աշխ., էջ 370:

[21] **Փափազյան Վ.,** նշվ. աշխ., էջ 155:

թե ուշ պետք է հայցեր երեսփոխանական ժողովի վստահությունը: Հուլիսի 17–ին կառավարությունն ամբողջ կազմով ժամանում է խորհրդարան և ներկայացնում իր ծրագիրը: Իթթիհատականները, չնայած Իթիլյաֆի կառավարության ծրագրի թերություններին, վստահություն են հայտնում թե՛ ծրագրին և թե՛ կառավարության անդամներին: Ծրագրի վերաբերյալ իր կարծիքն է հայտնում նաև Վարդգեսը: Նա նշում է, որ թեև կառավարությունը փաստում է ապօրինությունների, զեղծումների և այլ բացասական երևույթների առկայությունը երկրում, սակայն ոչինչ չի առաջարկում այդ խնդիրների լուծման համար: Նա նկատում է, որ ծրագրում չի խոսվում տնտեսական քաղաքականության մասին, և չեն ներկայացվում հողային խնդրի լուծման ուղիները: Իր ելույթի վերջում Վարդգեսը տեղեկացնում է, որ ինքը և իր ընկերները վստահություն չեն հայտնելու կառավարությանը, քանի որ վերջինս ցույց չի տալիս իր քաղաքական տեսլականը: Այսուհանդերձ, Վարդգեսը խոստանում է, որ անվստահություն նույնպես չի հայտնելու՝ հաշվի առնելով երկրում տիրող տագնապալի դրությունը և օսմանյան քաղաքացիների միասնության անհրաժեշտությունը[22]:

Այսպիսով՝ հայազգի երեսփոխանները, չնայած նոր կառավարության ոչինչ չասող ծրագրին, ձեռնպահ են մնում և փորձում են չխորացնել երկրում փոթորկող ներքաղաքական ճգնաժամը:

Այսպես, թե այնպես, իթթիհատական խորհրդարանն իր վերջին օրերն էր ապրում: Ներքաղաքական ճգնաժամը կայսրությունում հասել էր իր վերջնակետին:

1912 թ. հուլիսի 22-ին Աբդուլահ փաշայի և այլ հրամանատարների սպառնալից պահանջագրերի համաձայն՝ իթիլյաֆական կառավարությունը ձեռնամուխ է լինում օսմանյան խորհրդարանի լուծարմանը[23]: Իթիլյաֆականները իթթիհատական խորհրդարանը ցրելու հարցում օգտվում են նույն Իթթիհատի նախաձեռնությամբ ընդունված 43–րդ հոդվածով տրված իրավունքներից: Նախ ստեղծվում է կառավարական հանձնաժողով, որը պետք է կազմեր և խորհրդարանի վերին պալատին ներկայացներ թեզքերե (հայտարարություն)՝ երեսփոխանական ժողովը ցրելու վերաբերյալ: Վարչապետի հրավերով վերին պալատը քննում և հաստատում է կառավարության առաջարկը:

[22] Ազատամարտ, 18.07.1912:

[23] Բիւզանդիոն, 23.07.1912:

Վարչապետ Ահմեդ Մուխթար փաշան սուլթանից ստանում է իրատեն՝ ստորին պալատը ցրելու վերաբերյալ կայսերական հրամանագիրը:

Նույն օրը Երեսփոխանական ժողովը, այսինքն՝ ստորին պալատը, տեղեկանալով վերին պալատի որոշման մասին, հրավիրում է արտահերթ նիստ, որտեղ մերժում է լուծարման հրամանը և անվստահություն հայտնելով կառավարությանը, հեռանում է խորհրդարանից[24]: Հայազգի բոլոր երեսփոխանները, բացի Պ. Հալաճյանից, ով միանում է անվստահություն հայտնողներին, քվեարկում են ձեռնպահ:

Երբ վարչապետը ժամանում է խորհրդարան և հրավիրում է երեսփոխաններին, ներկայանում են ընդամենը 6 հոգի: Չնայած դրան, վարչապետը կարդում է երեսփոխանական ժողովի փակման մասին կայսերական հրամանագիրը: Հաջորդ օրը արդեն իսկ լուծարված խորհրդարանի նախագահ Խալիլ բեյը բաց նամակով դիմում է սուլթան Մեհմեդ Ե-ին, որտեղ, անօրինական հայտարարելով երեսփոխանական ժողովի լուծարումը, տեղեկացնում է խորհրդարանի նիստերը անորոշ ժամանակով դադարեցնելու մասին:

1912 թ. հոկտեմբերի 18-ին Լոզանի մոտ գտնվող Ուշի կոչված վայրում կնքվում է իտալա–թուրքական հաշտության պայմանագիրը: Օսմանյան կայսրության կողմից այն կնքում է իթթիլյաֆական կառավարության արգործնախարար Գաբրիել Նորատունկյանը: Պայմանագրի համաձայն, Օսմանյան կայսրությունից անջատվում էին Տրիպոլիտանիան, Կիրենաիկան և Դոդեկանեզյան կղզիները: Իտալա–թուրքական հաշտության պայմանագրի կնքման օրը Օսմանյան կայսրությունը ներքաշվում է նոր, ավելի վտանգավոր՝ Բալկանյան Առաջին պատերազմի մեջ:

Այսպիսով՝ չնայած 1911–1912 թթ. տեղի ունեցած ներքաղաքական վայրիվերումներին և երկու խորհրդարանների լուծարմանը, հայազգի պատգամավորները իտալա–թուրքական պատերազմի ողջ ընթացքում հանդես են գալիս բացառապես օսմանյան կայսրության անվտանգության ամրապնդման, տարածքային ամբողջականության պահպանման, արտաքին թշնամու դեմ միասնաբար պայքարելու և կառավարությանը սատար կանգնելու դիրքերից: Որպես օսմանյան պետության պաշտոնյաներ և պարզապես քաղաքացիներ, նրանք պատերազմի ողջ ընթացքում՝ ընդհուպ մինչև 1912 թ. հուլիսի 22–ի խորհրդարանի լուծարումը, ոչ մի ելույթով կամ քաղաքական քայլով չեն հակադրվել օսմանյան պետականության անվտանգությանը: Հա-

[24] Տե՛ս Ազատամարտ, 24.07.1912:

յազգի պատգամավորները, անկախ իրենց քաղաքական համոզմունքներից և կուսակցական պատկանելությունից, միասնական են եղել երկու կարևորագույն՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների և օսմանյան պետության ամբողջականության հարցերում:

THE STANCE OF THE ARMENIAN DEPUTIES OF THE OTTOMAN PARLIAMENT ON THE ITALIAN-TURKISH WAR

MARTIROSYAN N.

Summary

On September 29, 1911 Italy declared war on the Ottoman Empire. The Ottoman army was not ready for this war, neither was the “Ittihad ve Teraqqi” party, as it was not even capable of solving the internal problems. In Western Armenia, the Armenians suffered persecutions and were subjected to violent apostasy. However, the Armenian parliamentarians, irrespective of their party affiliation, remained loyal to the state in the Italian-Turkish war. Throughout the whole war, until the dissolution of the parliament on July 22, 1912 they preserved their loyalty to the Ottoman Empire.

ПОЗИЦИЯ АРМЯНСКИХ ДЕПУТАТОВ ОСМАНСКОГО ПАРЛАМЕНТА В ОТНОШЕНИИ ИТАЛО-ТУРЕЦКОЙ ВОЙНЫ

МАРТИРОСЯН Н.

Резюме

29 сентября 1911 года Италия объявила войну Османской империи. Османская армия не была готова к этой войне, равно как и партия «Иттихад ве Теракки», поскольку она не могла решить даже внутриполитических проблем. Западные армяне по-прежнему подвергались гонениям, насильственному вероотступничеству. Однако армянские парламентарии, независимо от их партийной принадлежности, оставались верными государству. На протяжении всей войны, до роспуска парламента 22 июля 1912 года, они сохраняли лояльность к Османской империи.